ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ
պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Հայ Եկեղեցու բարեկարգման խնդիրը խոր անցյալ ունի: Տարբեր ժամանակներում այն տարբեր ձևերով է բարձրացվել, սակայն միշտ կապված է եղել հասարակության զարգացման կամ այլ եւ այլ իրադարձությունների հետ:

ԺԹ դարում Հայ Եկեղեցու բարեկարգումը ռուսահայոց հատվածում երկու կարեւոր խնդիր ուներ՝ քահանայության եւ Էջմիածնի միաբանության հարցերը:

Շատ բարձր էր քահանայի դերը հայերի կրթական եւ բարոյական դաստիարակության գործում: Արիստակես եպս. Մեղրակյանն իր «Քահանայական խնդիրը» գրքում եւ Լեւոն Սարգսյանն իր «Հին ցավը» աշխատության մեջ քահանաներից պահանջում էին լինել ամենագետ, իրենց համայնքների նյութական եւ բարոյական վերքերին սպեղանի դնող: Քահանան պիտի լիներ եւ՝ Ավետարանի քարոզիչ, եկեղեցու պաշտոնյա, եւ՝ ուսուցիչ, եւ՝ գյուղատնտես, եւ՝ բժիշկ, եւ՝ փաստաբան, որ կարողանար համայնքի բոլոր պահանջները բավարարել:

Սակայն ձեռնադրվող քահանաները շատ էին հեռու այդքան պատրաստվածություն ունենալուց, շատերը նույնիսկ միջնակարգ կրթություն չունեին: Գյուղերում քահանա էին դառնում անպատրաստ անձինք. այդ խնդիրը լուծելու համար քահանաներին աշխատավարձ (ռոճիկ) տալու հարցն էր բարձրացվել, շատ ծրագրեր էին առաջարկվել, սակայն խնդիրն այդպես էլ լուծում չստացավ:

Երկրորդը Էջմիածնի միաբանության հարցն էր: Միաբանության անդամներին խստորեն քննադատում էին արտասահման մեկնելու եւ այնտեղ աստվածաբանություն սովորելու համար, որի փոխարեն առաջարկվում էր գործնական գիտելիքներ ձեռք բերել: Միաբանությունը քննադատվում էր նաեւ այն բանի համար, որ թեմական եւ ծիսական եկեղեցական դպրոցների ղեկավարությունը Էջմիածնի միաբանության ձեռքին էր, եւ պահանջում էին այն հանձնել աշխարհականներին:

Գր. Արծրունին 1890թ. հունվարի 20-ին գրում էր Արիստակես եպս. Մեղրակյանին. «Ձերդ Սրբազանությանը հայտնի է, որ ես 17 տարվա ընթացքում միշտ պաշտպանել եմ այն միտքը, որ մեր Եկեղեցին պետք է վերանորոգվի...: Միայն վերանորոգելով եւ միշտ վերանորոգելով ազգային դարավոր հաստատությունները՝ կարելի է պահպանել նրանց եւ թույլ չտալ, որ նրանք հետզհետե քայքայվեն: Այդ է պատճառը, որ ինձ համարում են անհաշտ թշնամի մի հաստատության, որի օգտի համար ես միշտ քարոզել եմ շարժում եւ ոչ

թե անշարժություն, համերաշխություն հոգեւորական դասակարգի եւ ժողովրդի մեջ, հարգանք հոգեւորական դասակարգի կողմից դեպի հոգեւորականները, հարգանք հոգեւորականների կողմից դեպի ժողովրդի իրավունքները»[1]:

Արիստակես եպս. Սեդրակյանն իր «Քահանայական խնդիր» գրքում եկեղեցու բարեւորոգման հետեւյալ հարցերն էր առաջարկում. ա) կրթված քահանաներ ունենալ, բ) քահանաների թիվը կրճատել. 2-3 գյուղի համար մի քահանա ձեռնադրել, գ) կամավոր տուրքերը վերացնել եւ ռոճիկ նշանակել, դ) եկեղեցիներում գանձանակ շրջեցնելը վերացնել, ե) քահանաները պարտավորվեն ժողովրդի մեջ եղած հեթանոսական սովորությունները վերացնել, զ) եկեղեցիները զարդարել եւ կահավորել միօրինակ, է) աստվածապաշտությունը եկեղեցիներում միօրինակ դարձնել եւ այլն:

Սակայն այս շրջանում եկեղեցական բարեւորոգության հարցը միայն մամուլում եւ գրականության մեջ քննության նյութ եղավ եւ որեւիցե գործնական հետեւանք չունեցավ:

1905 թ. ռուսական հեղափոխության հետեւանքով հոկտեմբերի 17-ին արձակվեց ցարի հայտնի հրովարտակը, որով խղճի, մամուլի, ժողովների, խոսքի ազատություններ տրվեցին ժողովրդին: Հայերը 21 կետից բաղկացած մի դիմում հանձնեցին Կովկասի փոխարքա կոմս Ի.Ի. Վորոնցով-Դաշկովին, որի մեջ 9-13-րդ կետերը վերաբերում էին եկեղեցուն:

9-րդ կետում ասված էր. «Լուրջ հիմունքների վրա դնել հայոց կրոնի, հայոց լեզվի, գրականության եւ պատմության ավանդումը պետական դպրոցներում, ուրիշ գլխավոր առարկաների հետ հավասար սկզբունքներով»:

10-րդ կետում. «Խղճի ազատություն. վերացնել բոլոր դավանական եւ կրոնական սահմանափակումները: Ազատություն տալ երդվելու մայրենի լեզվով բոլոր պետական եւ հասարակական հիմնարկությունների մեջ»:

11-րդ կետ. «Վերականգնել ինքնավար Հայկական Եկեղեցու իրավունքները, վերացնելով բոլոր սահմանափակումներն ու խոչընդոտները, մանավանդ ա) Հայոց Եկեղեցու կալվածքները, կուլտուրական-կրթական, բարեգործական հաստատությունները կառավարելու գործում, բ) Ս. Էջմիածնի սինոդի անդամների, թեմական առաջնորդների, հաջորդների եւ ուրիշ հոգեւոր վարչական պաշտոնյաների համայնական թեմերի եւ թե ամենայն հայոց հոգեւոր ազգային Ժողովները պարբերաբար գումարելու գործում»:

12-րդ կետ. «Վերադարձնել Հայկական Եկեղեցուն նրա ծիսական դպրոցները եւ կալվածքները, վերացնելով 1884-ից մինչեւ 1903 թվերի բոլոր օրենքները եւ կարգադրությունները, որոնք վերաբերում են թե ծիսական դպրոցներին, թե այդ դպրոցների եւ հայոց վանքերի, եկեղեցիների եւ հոգեւոր դպրոցների կալվածքներին»[2]:

Այս նույն ժամանակ «Արարատ» ամսագրի մեջ հրատարակվում էին Հայոց Եկեղեցու բարեւորոգման հետ կապված հոդվածներ, որոնց գաղափարը կարելի է հանգեցնել հետեւյալին. «Պոլոժենիեն» պետք է փոխել. վարչական գործերը վարել եւ վարչական պաշտոնները զբաղեցնել ընտրությամբ, դպրոցները հանել եկեղեցու խնամակալությունից, վանական եւ եկեղեցական կալվածքները հանձնել աշխարհականների հսկողությանը, ռուսահայոց թեմերում ընտրել թեմական խորհուրդներ, ուսումը դարձնել պարտադիր:

---

1 «Հովիտ», 1908, թ. 5:

2 «Արարատ», 1908, էջ 1076:

1906թ. մայիսի 10-ին իր թ. 549 կոնդակով Մկրտիչ Ա Կաթողիկոսը հաստատում էր թեմի բոլոր գործակալների եւ հոգեւոր վարչական հաստատությունների պաշտոնյաների ընտրության սկզբունքը: Այդ կոնդակում նա ասում էր. «Քեզ ենք տալիս, ժողովուրդ հայոց, թեմական առաջնորդների, հաջորդների, գործակալների եւ հոգեւոր վարչական հաստատությանց պաշտոնյաների ընտրության իրավունքը, որից հետո ընտրյալները կհրավիրուեն իրենց պաշտոնին պետության կողմից սահմանված օրինական կարգով»[3]:

Հուլիսի 7-ին Խրիմյան Հայրիկը, ի հետեւումն մայիսի 10-ի իր կոնդակի ինը կետից բաղկացած նոր թ. 693 կոնդակ հոչակեց, որպեսզի ռուսահայոց թեմերում հայ ազգաբնակչությունը կենտրոնական ժողովի պատգամավորների ընտրությունները կատարելիս առաջնորդվի դրանով: Այդ կոնդակի կետերն էին.

1. Առաջիկա օգոստոսի 15-ին գումարվելու է Ռուսիայի սահմաններում ապրող հայ ժողովրդի ընտրյալ պատգամավորների Կենտրոնական ժողովը:

2. Ռուսահայոց եկեղեցական պատգամավորական այդ ժողովը կազմվելու է ժողովրդի ընտրած պատգամավորներից:

3. Այս պատգամավորներին ընտրելու համար յուրաքանչյուր ընտրական շրջանում պատվիրակների ժողով է գումարվելու մինչեւ հուլիսի 15-ը:

4. Պատվիրակների ժողովները կազմվելու են յուրաքանչյուրը համապատասխան ընտրական շրջանի բոլոր ծխական եկեղեցիների (կամ աղոթատների) ընտրած պատվիրակներից: Մինչեւ 1000 հոգի ժողովուրդ ունեցող յուրաքանչյուր եկեղեցի ընտրում է մի պատվիրակ, իսկ 1000-ից ավելի ժողովուրդ ունեցող եկեղեցիները յուրաքանչյուր 1000-ի համար մի-մի պատվիրակ են ընտրում (վերջին 1000-ը կարող է լրիվ չլինել, սակայն ոչ պակաս 500-ից): Պատվիրակների ժողովը կանոնավոր է համարվում, եթե ներկա է բոլոր ընտրված պատվիրակների կեսից ավելին:

5. Պատվիրակների ընտրությունը պետք է ձեռնարկել սույն հրահանգը ստանալուց անմիջապես հետո: Ընտրությունը կատարելու են ծխական ժողովները, որոնց մասնակցելու իրավունք ունեն նույն եկեղեցու 21 տարին լրացած բոլոր ծխականները

6. Պատվիրակների յուրաքանչյուր ժողով, Կենտրոնական ժողովին մասնակցելու համար, պատգամավորներ է ընտրում իր ընտրական շրջանի հայ ազգաբնակչության թվի համեմատ:

7. Թե՛ պատվիրակ, թե՛ պատգամավոր կարող են ընտրվել նաեւ նույն ծխական եկեղեցուն կամ ընտրական շրջանին չպատկանող անձինք:

8. Կենտրոնական ժողովը, իբրեւ ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ եւ տնօրեն, կարող է յուր քննությանը ենթարկել եւ որոշումներ տալ ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ: Կենտրոնական ժողովի առաջիկա նստաշրջանի առաջ դնում ենք իբրեւ անհետաձգելի կարեւորության ունեցող խորհուրդներ՝ դպրոցական, տնտեսական գործերը եւ թեմական ժողովները կարգավորելու հարցերը:

9. Սույն հրահանգը գործելու է մինչեւ Կենտրոնական ժողովի հաստատուն կանոնադրության մշակումը եւ վավերացումը:

1906թ. օգոստոսի 15-ին Ս. Էջմիածնում գումարված ռուսահայ ներկայացուցիչնե-

3 Մաշտոցի անվ. Մատենադարան, արխիվ, թղթ. 84 ե, վավ. 31:

ի ժողովը, որը կոչվում էր նաեւ Կենտրոնական ժողով, իր առջեւ նպատակ էր դրել բոլոր արծարծվող խնդիրները վերջնականապես մշակել եւ որոշումները պարտադիր դարձնել ռուսահայոց համար: Սակայն ժողովն իր բուն նպատակին չհասավ, որովհետեւ շեղվեց եւ վերածվեց քաղաքական հակամարտության եւ ցրվեց կառավարության կարգադրությամբ:

Կենտրոնական ժողովում դաշնակցականները պահանջում էին.

1. Կրոնը պարտադիր չէ:

2. Եկեղեցական - վանական կալվածքները համայնացնել, եկամուտները ազգային մշակութային հասպատություններին հանձնել:

3. Հոգեւորականությանը թողնել միայն ծիսական, արարողական եւ դավանական հարցերը:

4. Մշակութային ներքին գործերի վերաբերմամբ օրենսդրական տնօրեն մարմինը քառանդամ սիստեմով ընտրված Կենտրոնական պատգամավորական Ժողով ն է:

Բացի վերոնշյալից այն Ժամանակ մամուլում արծարծվում էին եւ մի շարք այլ հարցեր.

1. Եթե հայ ու վրացի ամուսնանում են, չպահանջել, որ կրոնափոխ լինեն, եթե ամուսիններից մեկը օտարադավան է: 2. Քարոզչական կուրսեր հիմնել թեմի կենտրոնում ամառվա 3 ամիսների ընթացքում, հմուտ քարոզչի ղեկավարությամբ, գյուղական քահանաների համար: 3. Որբերի եւ այրիների գանձարկղը կանոնավորել՝ չքավոր հոգեւորականների ընտանիքները ապահովելու: 4. Տնօրինեքը վերացնել: 5. Ամուսնացողների տարիքի տարբերությունը 10-ից ավելի չլինի: 6. Դպիրների նյութականը բարվոքել, հասպատուն ռոճիկ նշանակել եւ կրթական որոշ ցենզ պահանջել: 7. Վանականությանը հեռացնել վարչական եւ հասարակական բոլոր պաշտոններից: 8. Վարչությունը կազմել այսպես. ապակենտրոնացման եւ կոլեգյալ համակարգով միանձնյա իշխանություն չլինի առաջնորդի, հաջորդի: 9. Եկեղեցում մտցնել գործիքային երաժշտություն: 10. Տարին մի անգամ Ս. Պետրոսի լումայի պես «Լուսավորչի լումա» հավաքել եկեղեցիներում: 11. Կուսակրոնությանը զրկել արտոնություններից: 12. Այրի քահանաներին ամենալայն իրավունքներ տալ: 13. Հայ Եկեղեցին հավասարեցնել նախնական պարզության: Մաշտոցը կրճատել: 14. Եկեղեցում վերացնել գրաբարի գործածությունը: 15. Պետական եւ ազգային դպրոցներում կրոնի ուսուցումը կամավոր դարձնել: 16. Էջմիածնում հրավիրել ընդհանուր համազգային ժողով, առանց դավանության խտրության: 17. Նզովքը եկեղեցում վերացնել: 18. Օտար սրբերի թիվը քչացնել: 19. Մեծ պասի ճաշվա ժամերգությունը կրճատումով միացնել առավոտյան ժամերգությանը: 20. Հալավօրհնեքը վերացնել: 21. «Մեղա»-ն կրճատումներով ասել: 22. «Հրաժարիմք»-ը կրճատել[4]:

Բարձրացված հարցերը հետեւանք էին այն ժամանակվա հեղափոխական շրջանի: Այս պահանջները ոչ միայն զուտ աշխարհիկ էին եւ ծայրահեղ, այլեւ վնասակար Հայ Եկեղեցու համար եւ անմիջական նպատակ, ունեին սահմանափակել կարգը:

Հայ հոգեւորականության մի մասը ցանկանում էր վերանորոգված տեսնել Հայոց Եկեղեցին, սակայն հաճախ այդ հարցի լուծման իրենց տեսակետները իոր ուսումնասիրութ-

---

4 Գիւտ եպիսկոպոս, Հայ Եկեղեցու բարենորոգութեան խնդիրը եւ Ազգային եկեղեցական Ժողովը, Փարիզ, 1926, էջ 19-20:

յունների կարիք էին զգում, ինչպես նաեւ հաճախ անընդունելի էին Մայր Աթոռի համար: Այսպես օրինակ, «Արարատ» ամսագրում 1908թ. նոյեմբերի համարում հրատարակված Երվանդ վարդ. Տեր-Մինասյանի «Վերանորոգության կարիքը Հայոց Եկեղեցու համար», հոդվածը միայն Հայ Եկեղեցին քննադատելու նպատակ ուներ: Եւ դա ոչ թե Հայ Եկեղեցու սպասավորի, այլ բողոքական քարոզչի տեսակետ էր: Հոդվածի հեղինակի նպատակն էր սեւացնել հայոց Եկեղեցին[5]:

1908թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Մատթեոս արքեպ. Իզմիրլյանը, որը 1909 թ. դեկտեմբերի 13-ին թ. 602 կոնդակով թույլատրեց եկեղեցիներում անցկացնել էլեկտրական լուսավորություն, ինչպես նաեւ կարգադրեց 1910 թ. հունվարի 1-ից բոլոր դպրոցներում եւ հոգեւոր հաստատություններում գրագրությունն ու գործավարությունը կատարել աշխարհաբար լեզվով՝ գրաբարով թողնելով միայն ծեսը, Հայրապետական կոնդակները ու դատարանում երդում տալը: Սա Եկեղեցու բարեփոխության շղթայի առաջին օղակն էր:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսած բարեկարգությունները արժանացան արեւմտահայ հոգեւորականության հավանությանը: Գրիգորիս ծ. վարդապետը՝ 1911թ. Կոստանդնուպոլսում լույս տեսած «Ս. Էջմիածնի բարեկարգության պետքը» իր գրքույկի մեջ նշում էր. «բագրված բարեկարգության գործադրությամբ Մայր Աթոռը պիտի կրնա բարձրանալ սրբությամբ օծուն իր նախկին արժանավոր վեհաշուք բարձրության:

Ես այն խոր համոզումը ունիմ, որ Ս. Էջմիածնի հարգելի միաբանության պատրաստած երիտասարդ ուժերը, մոռանալով ամեն անձնականություն, պետք ունին բարեկամեցողության եւ իրար հասկնալով ու իրար ներելով ձեռնարկելու ինքնարերաբար Ս. Էջմիածնի հիմնական բարեկարգության անհետաձգելի գործին»:

1910 թ. օգոստոսի 25-ին Բաբկեն սրբազանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս) ներկայացրեց Կ.Պոլսի պատրիարք Եղիշե արքեպս. Դուրյանին եւ ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Բ-ին Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգության ծրագիր, որը բաղկացած էր երեք հիմնական կետից. բարեկարգությունը նախ՝ պետք է սկսել հայոց դպրոցից, որտեղ հայ երեխաները պետք է ստանան քրիստոնեական հիմնական կրթություն եւ դաստիարակություն: Հայ դպրոցի ողջ ոգին պետք է հիմնվի քրիստոնեական բարոյականության վրա:

Երկրորդ՝ բարեկարգությունը պետք է լինի Եկեղեցու պաշտոնեության պատրաստությունը:

Եկեղեցականներն անպայման պետք է միջնակարգ կրթություն ունենան: Միայն այսպիսի անձնավորություններով Եկեղեցին «միշտ կենդանութիւն պիտի ճառագայթէ եւ եկեղեցին ալ նոր դպրոց մը պիտի ըլլայ ժողովրդի համար»:

Երրորդը՝ բարեկարգություն Եկեղեցու ամբողջ ժամակարգության, պաշտամունքի, կարգուսարքի մեջ՝ հասցնելով այն պարզության, նպաստելով նրա ազդեցության մեծացմանը[6]:

1908թ. Մատթեոս Բ Կաթողիկոսի ընտրության համար գումարված Ազգային եկեղե-

---

5 Տե՛ս **Երվանդ Տեր-Մինասյան,** Հայոց Եկեղեցու վերանորոգության խնդիրը, Թիֆլիս, 1910, էջ 13-15:

6 **Բարգէն Ա Կաթողիկոս,** Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցուոյ, Անթիլիաս-Լիբանան, 1940, էջ 29-30:

ցական ժողովի պատգամավորներից ոմանք իրենց հետ բերեցին ժողովրդի պահանջները: Այդ պահանջներից էականներն էին՝

ա) «Պոլոժենիեն» վերացնել, բ) Ընդհանուր ազգային պարտադիր տուրք նշանակել գ) Համազգային ժողով գումարել՝ վերաքննելու եկեղեցու նախնի կանոնները եւ բարեփոխության ենթարկել ամուսնական եւ այլ կանոններ, որոնք ներկա պայմաններին անհամապատասխան են, դ) Սինոդից սկսած բոլոր պաշտոնյաները ընտրովի պետք է լինեն, ե) Կաթողիկոսին կից լինի մի ազգընտիր խորհուրդ հոգեւորական եւ աշխարհական անձերից զ) Սինոդում լինի հատուկ, կալվածոց տեսչություն:

1912 թ. հոկտեմբերի 2-10-ը Էջմիածնում ռուսահայ հատվածի թեմական առաջնորդները եւ Սինոդի անդամներն ունեցան միացյալ խորհրդակցություն, որտեղ քննության առնվեցին հետեւյալ հարցերը.

1. Եկեղեցիների բարեկարգության խնդիրը,
2. Էջմիածնում եկեղեցական զգեստների, անոթների, պատկերների պահեստ ունենալու, Էջմիածնում մոմագործարան հիմնելու հարցերը,
3. Քահանաների կրթական ցենզի, տնտեսական ապահովության, տեղափոխությունների, ապօրինի կնապահության, պետական եւ ազգային դպրոցներում կրոնասուցչության, քահանաներին քննիչ նշանակելու հարցերը,
4. Վանքերի եկամուտների, վանական հոգաբարձության, վանահայրերի, վանքերի վերանորոգության խնդիրները,
5. Սրբադրամի, պտղադրամի, շնչադրամի, հոգեբաժնի հարցերը,
6. Կոնսիստորիաների եւ հոգեւոր կառավարությունների պաշտոնյաների ցենզի եւ ապահովության խնդիրը,
7. Ամուսնալուծության քննության եղանակի, ծննդյան վկայականը երդմամբ տալու խնդիրները,
8. Դարբերաբար թեմերը քննելու, թեմերի բաժանման, հատկապես Ասորիստանի եւ Բեսարաբիայի թեմերի սահմանները որոշելու խնդիրները,
9. Դպրոցների համար ծրագիր, կանոնադրություն մշակելու, բարոյական-կրոնական դաստիարակության, ուսուցիչների ցենզի, ապահովության, դպրոցների ապահովության, դպրոցական ֆոնդի, թեմական տեսուչների, դպրոցական տոների, դպրոցական նոր ձեւի շենքերի, պետական դպրոցներում հայոց լեզու եւ կրոն ավանդելու խնդիրները,
10. Օտարադավանների մեր Եկեղեցու ծոցն ընդունելիս ամուսիններին փոխելու, որեւէ աղանդի հետեւողի՝ լուսավորչականի հետ պսակելու հնարավորության խնդիրները:

«Պոլոժենիայի» փոփոխության խնդիրը ծագել էր դեռ Մատթեոս Ա Կաթողիկոսի օրոք: Կաթողիկոսը կազմել էր փվել սահմանադրություն եւ ուղարկել Պետերբուրգ կենտրոնական կառավարության հաստատման, որը անուշադրության մատնեց այս հարցի լուծումը:

Ս. Էջմիածնում 1914թ. այդ խնդիրը կրկին քննության առնվեց ռուսահայ հատվածում՝ ունենալ 11 թեմ 6-ի փոխարեն, Կաթողիկոսի ընտրության ժամանակ պահել թեկնածուների ընտրության գաղտնիությունը, կաթողիկոսական ընտրության նոր հրահանգ մշակել: Սակայն շուտով սկսված Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով այս անգամ եւս խնդիրն ընթացք չստացավ:

1917թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանյայց Եկեղեցին հնարավորություն է ստանում իր բարենորոգության խնդիրներն արծարծելու: Ցարական կառավարության տապալումով վերացվում էին նաեւ «Պոլոժոնիայով» պարտադրված նախկին բոլոր հիմնարկությունները՝ Սինոդը, Կոնսիստորիաները եւ հոգեւոր կառավարությունները: Ուրեմն հետզհետե դրանց փոխարեն պետք է ստեղծվեին նորերը: Սրանից ելնելով՝ 1917 թ. մարտի 19-ին Մայր Աթոռի միաբանությունը դիմեց Գեւորգ Ե Կաթողիկոսին եւ խնդրեց նախաձեռնություն ցուցաբերել բարեփոխումներ կատարելու ուղղությամբ՝ տալով համապատասխան բացատրություններ եւ առաջարկություններ:

Ժամանակավոր կառավարությունը հրապարակել էր մի ծրագիր, որի երկրորդ հոդվածի համաձայն՝ վերացվում էին Ռուսական կայսրության բոլոր «դասակարգային, կրոնական եւ ազգային սահմանափակումները», դրանով իսկ լուծարվում էր 1836 թ. օրենսդրությունը (Պոլոժենիան):

Մարտի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետի հրամանով անցկացվեց ժողով՝ Հուսիկ եւ Մատթեոս սրբազանների եւ Տիրայր ու Գեւորգ վարդապետների մասնակցությամբ: Այդ ժողովը գործադրության համար ընդունեց հետեւյալ ժամանակավոր որոշումները.

1. Հայ Առաքելական Եկեղեցին, որպես ինքնուրույն եւ ինքնագլուխ, անկախ եկեղեցի, պետք է ամբողջությամբ, թե՛ կազմության եւ թե՛ ներքին վարչական կառավարման մեջ, ըստ ամենայնի ազատ լինի այն բոլոր սահմանափակումներից, որոնք առաջ են եկել 1936 թվին պետության կողմից հաստատված «Պոլոժենիե»-ով, ինչպես եւ այնուհետեւ, մինչեւ ներկա շրջանը, տարբեր ժամանակներում արված կառավարական հրահանգներով, շրջաբերականներով, ժամանակավոր կանոններով եւ ցուցումներով, որոնք օրենքի ուժ են ստացել եւ գործադրության անցել:

2. Մինչեւ Եկեղեցու ոգուն եւ ներկայիս պահանջներին համապատասխան ներքին կանոնադրության խմբագրվելն ու օրինական կարգով գործադրության մեջ մտնելը, ընթացիկ գործերը վարել Հայ Եկեղեցու սովորական կարգով, միայն նոր պաշտոնների հոգեւոր իշխանության կողմից նշանակվելու ժամանակ հայտնել կառավարության ոչ հավանության եւ կամ հաստատության, այլ ի գիտություն միայն[7]:

Մարտի 23-ին Գեւորգ Ե Կաթողիկոսը Ռուսաց պետության ժամանակավոր կառավարությանն ուղղեց թ. 464 կոնդակը, պահանջելով լուծարել Հայոց Եկեղեցու իրավունքները սահմանափակող «Պոլոժենիեն»: Վեհափառ Հայրապետը մասնավորապես գրում էր. «Հայ Առաքելական Եկեղեցին յուր հիմնադրության իսկ օրերից երկար դարերի ընթացքում կառավարվել է, ինքնուրույն եւ ինքնագլուխ՝ առաջադրվելով եկեղեցական ժողովներ կողմից հաստատված նախնական կանոններով եւ կարգերով:

Սակայն սկսած 1836 թվականից՝ ներկայիս արքայական իշխանությունը նպատակ ունենալով ոչնչացնելու մեր Եկեղեցու յուրաքանչյուր ինքնուրույն արտահայտությունը, կանոնադրությունը, ոչ միայն տվեց Հայ Եկեղեցուն մի կանոնադրություն՝ «Պոլոժենիե» անունով, որով հիմնովին խախտվեց Հայ Եկեղեցու ինքնավարությունը, այլեւ հետագայի բազմա-

7 Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց. 5., գ. 151, թ. 21:

թիվ հրահանգ-հրամաններով եւ շրջաբերականներով հետեւողականորեն եւ ըստ ամենայնի սահմանափակեց նորա ինքնուրույնությունը:

Այժմ, երբ հասպարվում է Ռուսական պետության մեջ ազատության սկզբունքը, վերը հիշատակած «Պոլոժենիե»-ն հետագա օրենսդրական կարգերը, որոնք հրատարակված են ի լրացումն «Պոլոժենիայի», ոչ միայն անհամապատասխան լինելով հայ նախնական Եկեղեցու ոգուն, այլեւ ռուսական պետության մեջ ապրող բոլոր ազգերի նկատմամբ հայտարարված ազատության եւ հավասարության սկզբունքներին, այդ օրենքներն ու կարգերն այժմվանից պետք է վերսրուգվեն ժամանակավոր կառավարության կողմից օրինական կարգով: Իսկ մինչ այդ վերսրուգումը Հայ Եկեղեցին կկառավարվի ըստ նախնական կանոնական իրավունքների»[8]:

Մարտի 30-ին Թիֆլիսում տեղի ունեցան բանակցություններ կաթողիկոսական ներկայացուցիչների՝ Մխիթար, Բագրատ եւ Գեւորգ սրբազանների եւ Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄԻ) անդամների միջեւ, որտեղ ՕԶԱԿՈՄԻ նախագահ Ա.Խա□լամովը արտահայտեց հետեւյալ միտքը. «Նախկին ռեժիմը հայ ազգին եւ եկեղեցուն շատ է նեղել ու հալածել, սակայն նոր իրավակարգի ժամանակ նա կազատվի եւ իրավունք կստանա ինքնուրույն տնօրինելու յուր ինքնորոշման վերաբերյալ բոլոր խնդիրները»[9]:

Սակայն նոր իշխանությունների խոստումները մնացին անկատար:

Եկեղեցական հրատապ հարցերը լուծելու համար Գեւորգ Ե Կաթողիկոսը 1917 թ. ապրիլի 5-ին թ. 550 կոնդակով Հուսիկ արքեպ. Մովսեսյանի գլխավորությամբ ստեղծեց հանձնախումբ, որի կազմի մեջ մտան նաեւ Երեւանի փոխթեմակալ Խորեն եպս. Մուրադբեկյանը, Սինոդի անդամ Մատթեոս եպս. Մատթեոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տիրայր ծ. վարդ. Հովհաննիսյանը, ինչպես նաեւ Գեւորգ վարդ. Չորեքչյանը եւ Գյուտ աբեղա Տեր-Ղազարյանը: Այս հանձնախմբի առջեւ դրվեց հետեւյալ խնդիրը. «... առ ի քննել զպարագայս որ առաջի մեր դնել ոգի ժամանակիս եւ կազմել ուրուագիծ ցանկալի փոփոխութեանց ինչ-ինչ մասուս վարչականին կազմակերպութեան արդեան վիճակի է, որ սահմանս «Սահմանադրութեան» 1836 թվականի է, որ այլ եւ այլ սահմանս վարչականին կազմության եւ զկնի խռհական խորհրդակցութեան Ձերոյ առաջի առնել Մեզ զտրեսութիւն եւ զկարծիս: Յանձնախմբիդ առ ի տնօրինել զոր ինչ արժանն ունիմք վարկանել ընդ փոյթ ի վերականգնումն նախկին կարգաց եւ կանոնաց ըստ ոգւոյ Ս. Եկեղեցւոյս Մերոյ, եւ որ ըստ առաջի արարեալ ուրուագիծ նախորդակի է, որ ըստ առաւելագոյն լայնատարր գումարման խորհրդակցական ժողովոյ, զոր ունիմք գումարել ի մօտոյ, մինչ զգումարումն ազգային ընդհանուր ժողովոյ, յոյր ձեռն ունի կազմակերպիլ վերջնական կանոնական Սահմանադրութիւն վարչութեան Ս. Եկեղեցւոյս»[10]:

Գեւորգ Ե Կաթողիկոսի կոնդակի նպատակն էր վերականգնել Հայաստանյայց Եկեղեցու նախնական, ժողովրդական սկզբունքներն ու ավանդույթները, որոնք օտար ճնշման եւ ազդեցության հետեւանքով խաթարվել էին, փոխվել եւ վերացվել:

Իր առջեւ նպատակ դնելով Մայր Աթոռի միաբանության համար սահմանելու մի հաս-

8 Անդ:
9 ՀԱԱ, ֆ.57, ց. 5, գ. 151, թ. 26-27:
10 «Արարատ» 1917, ապրիլ-մայիս, էջ 268-270:

տպատուն կանոնադրություն՝ Գեորգ Ե Կաթողիկոսը 1917 թ. մայիսի 15-ի թ.849 կոնդակով դիմեց Մայր Աթոռի միաբանությանը՝ պատվիրելով միավորվել եւ կարող ուժերի օժանդակությամբ ստեղծել հանձնաժողովներ, մշակել նոր կանոնադրություն եւ վերջնական նախագիծը ներկայացնել հաստատման:

1917 թ. մայիսի 19-ին մինչեւ հունիսի 2-ը Գեորգ եպս. Չորեքչյանի նախագահությամբ դիվանատանը տեղի ունեցան Մայր Աթոռի միաբանության կանոնադրության նախագիծը մշակող հանձնաժողովի նիստերը:

Հանձնաժողովը կանոնադրության նախագծի համար հիմք ընդունեց միաբանական ժողովում մշակված ընդհանուր սկզբունքները.

ա) հոգեւոր կյանք, բ) կրթական-գիտական եւ գ) վարչական կողմեր. նախագիծը բաժանվեց հետեւյալ գլխավոր մասերի.

ա) հիմնական կանոններ, բ) միաբանական կազմը, գ) միաբանության պարտքն ու իրավունքը, դ) միաբանական ընդհանուր ժողով, ե) Մայր Տաճար, զ) Վեհարան, է) վանական վարչական մարմիններ եւ հաստատություններ՝ 1. մատենադարան, 2. թանգարան, 3. հյուրատուն, 4. հիվանդանոց-ծերանոց, 5. սեղանատուն, 6. հանդերձատուն, թ) վանական վարչական մարմիններ՝ 1. վանական խորհուրդ 2. ուսումնական խորհուրդ, 3. հայրենի հնությունները պաշտպանող եւ հովանավորող խորհուրդ, 4. քարոզչական մարմին, 5. տնտեսական խորհուրդ, 6. վանական կառավարություն, 7. վերստուգիչ մարմին, ժ) միաբանական կանոնադրության վերաքննություն:

Այս կանոնադրության նորույթն էին հետեւյալ հոդվածները եւ գլուխները՝

Ա գլուխ, հոդված 5.

Ս. Էջմիածնի միաբանությունն ունի իր առանձին կանոնադրությունը, որը մշակում է միաբանական ընդհանուր ժողովը, եւ վանահայր է հաստատում Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

6. Համաձայն եկեղեցական կանոնների եւ պատմականորեն սրբագործված տվյալների՝ Ս.Էջմիածնի միաբանության նպատակն է՝

ա) Ավետարանը քարոզել

բ) Հոգեւոր դպրոցներ բանալ

գ) Հայագիտությունը ու հայ գեղարվեստը մշակել:

8. Միաբանական կյանքի հիմքը Հայ Եկեղեցու սրբագործված ընտրական եւ ժողովական (կոլեգիալ) սկզբունքն է:

9. Միաբանությունը վարում է համայնական կյանք՝

Բ գլուխ, հոդված 11.

Միաբանության անդամ ընտրվողը պետք է լինի

ա) 21 տարեկան

բ) Առնվազն միջնակարգ կրթության տեր

գ) Ֆիզիկապես առողջ եւ ազատ մարմնական ու հոգեկան արատներից:

Է գլուխ, հոդված 48.

Վանական բոլոր վարչություններն ու մարմիններն իրենց ներքին գործառնության հա-

մար ունեն հատուկ հրահանգներ, որոնք միաբանական ժողովում ընդունելուց եւ Վեհափառ Հայրապետի կողմից հաստատվելուց հետո գործադրված են[11]:

51. Վանական բոլոր հիմնարկություններն ու մարմիններն իրենց ներքին գործառնության մեջ անկախ են:

Միայն միապետության տապալումով կարող էր կյանքի կոչվել այսպիսի առաջավոր եւ ազգային վանական կանոնադրություն:

1917 Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո Հայ Եկեղեցու բարեկարգման հարցերն ամբողջովին իր ձեռքը վերցրեց Ս. Էջմիածինը, եւ ինքն էլ փորձեց բարեկարգության խնդիրը համաժողովրդական քննարկման հարց դարձնել: Այդ նպատակով Գեւորգ Ե Կաթողիկոսը Ս. Էջմիածնում ռուսահայ հոգեւորականության համագումար հրավիրեց, որտեղ պետք է մի ծրագիր քննարկվեր եւ ներկայացվեր առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովին:

Մինչ այդպիսի համագումար հրավիրելը, ռուսահայոց թեմերում անցկացվեցին թեմական համագումար-ժողովներ: Այսպես, մայիսի 25-ին Թիֆլիսի առաջնորդարանի դահլիճում բացվեց Վրաստանի եւ Իմերեթիայի հայ հոգեւորականության թեմական համագումարը: Համագումարի նախաձեռնողներն էին թեմի հայ քահանաները, երեցփոխանները, հոգաբարձուները: Համագումարում ստեղծվեց հոգաբարձուների հանձնաժողով, որի նախագահ ընտրվեց Հովսեփ քհն. Տեր-Պետրոսյանցը, իսկ անդամներ՝ Գյուտ ավագ քհն. Աղանյանը, Սարգիս ավագ քհն. Շիրյանը, Սահակ ավագ քհն. Սահակյանը, Խորեն ավագ քհն. Խուցյանը, Հարություն քհն. Ճուղուրյանը, Սարգիս քհն. Երգնկյանը եւ ուրիշներ: Հանձնաժողովը, կոչով դիմելով վիրահայության թեմի Հայ եկեղեցական համայնքին՝ նշեց. «Ռուսական հեղափոխությունը, տապալելով միապետական իրավակարգը, ձգտում է նոր, լայն ժողովրդական ազատ հիմունքների վրա կառուցանել ռուսաց բազմացեղ ու բազմալեզու տերության համապետական կյանքը, խոստանալով տալ յուրաքանչյուր ազգի ու լեզվի կատարյալ ինքնորոշումն ու անկաշկանդ զարգացումը... Այժմ, երբ Ռուսաստանի բոլոր ժողովուրդները, մեծ ու փոքր ազգությունները, հոսանքներն ու կուսակցությունները համախմբվում, կազմակերպվում են՝ կուռ ուժ կազմելու գալիք պատմական օրերի առաջ, հայ քահանայությունն էլ պարտականություն ունի իր ծխի հետ միասին աշխատելու վերականգնել Առաքելական Եկեղեցու ազատությունն ու անկախությունը, այլեւ դյուրացնելու նրա նվիրապետությունը, հենված իր դարավոր իրավունքների վրա եւ դրդված ժամանակի հրամայական պահանջներից»[12]:

Հիմնական խնդիրները, որոնք դրվեցին Թիֆլիսի համագումարի օրակարգում, հետեւյալն էին՝ «Գրիգորյան» անվանումը փոխարինել «Հայ Առաքելական» Եկեղեցիով, սինոդը եւ կոնսիստորիաները վերացնել, եւ մի շարք այլ հարցեր՝ նվիրված Եկեղեցու ներքին եւ արտաքին բարեփոխումներին: Համագումարն ընդունեց եկեղեցական բարեփոխության ծրագրի նախագիծ.

1. Հայոց Եկեղեցին հիմնված է առաքյալների քարոզչությամբ եւ ջանքերով, հետեւա-

11 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 459, թ.6, 46-55:
12 ՀԱԱ ֆ. 57, ց. 2, գ. 457, թ. 10:

բար պիտի կոչվի «Հայոց Առաքելական Եկեղեցի» եւ ոչ «Գրիգորյան» կամ «Լուսավորչական»:

2. Հայոց Առաքելական Եկեղեցու պետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, որն ընտրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայացած համազգային ժողովով, եւ նա հավատարմության երդում է տալիս հայ ազգին ու Եկեղեցուն:

3.Վերացվում են սինոդը, կոնսիստորիաները եւ հոգեւոր կառավարությունները, հիմնվում են Գերագույն, կենտրոնական, թեմական եւ գավառական խորհուրդներ:

4.Կուսակրոնությունը պարտադիր չէ. հոգեւորականը, անկախ իր հոգեւոր աստիճանից՝ աշխարհականից մինչեւ Կաթողիկոս, ինքն է որոշում ամուսնանալու իր իրավունքը:

5. Քահանայի առաջ բաց են եկեղեցական նվիրապետության բոլոր աստիճաններն ու պաշտոնները, մինչեւ իսկ կաթողիկոսությունը:

6. Անհրաժեշտ է բարեփոխել հոգեւորականի ապրուստի հայթայթման եղանակը, նա ձրի պետք է կատարի իր սրբազնագույն պաշտոնը:

7. Հոգեւորականին պետք է տալ քաղաքացիական բոլոր իրավունքները՝ կոչման համապատասխան սահմաններում:

8. Եկեղեցու ներքին եւ արտաքին բարեկարգության ու բարեզարդության անհրաժեշտությունը ժամանակակից ոգով ու կենդանի լեզվով պահանջում է հիմնական փոփոխություն մտցնել ծիսակատարության եւ աստվածապաշտության կարգի մեջ, պետք է սիրելի եւ գրավիչ դարձնել Եկեղեցին թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ՝ վերադարձնելով նրան այն պարզությունը, որն ուներ նա օտար ազդեցություններից առաջ, ուժ տալով եկեղեցական երաժշտությանը, երգեցողությանը եւ ավետարանական կենդանի խոսքին:

9. Անհրաժեշտ է ձեռնհաս աշխարհական եւ հոգեւորական անդամներից կազմված մարմնի ձեռքով պատրաստել Հայոց Եկեղեցու օրենսգիրքը:

10. Անհրաժեշտ է ամենամոտ ապագայում գումարել ազգային-եկեղեցական սահմանադիր ժողով[13]:

Հասկանալի է, որ այս համագումարում ընդունված նախագծի ոչ բոլոր կետերն էին Հայ Եկեղեցու համար ընդունելի: Անժխտելի է, որ նախագծի 4-րդ եւ 5-րդ կետերը, որպես նորություն, առաջադեմ հայացքներ էին պարունակում: Բայց, այնուամենայնիվ, այդ նորույթները, լինելով զուտ աշխարհական, անընդունելի էին Հայաստանյայց Եկեղեցու համար: Չորրորդ կետը կարող էր ընդունելի լինել բողոքական կամ աղանդավորական եկեղեցու համար: Իսկ հինգերորդ կետը միայն ընդունելի էր քահանայական դասի համար, որովհետեւ ուժեղացնում էր նրանց դիրքերը եւ լիազորությունները:

1917թ. հունիսին ռուսահայ թեմերից հոգեւորականության խորհրդակցական ժողով եկող պատգամավորներն իրենց հետ Մայր Աթոռ բերեցին քննարկվող Հայոց Եկեղեցու բարեկարգության եւ բարեփոխումների՝ իրենց թեմերի առաջարկությունները:

1917 թ. հունիսի 12-ին Ս. Էջմիածնում գումարվեց նախկին հարվածի հոգեւորականների խորհրդակցական ժողով, որը տեւեց մինչեւ հունիսի 23-ը: Տեղի ունեցած 13 նիստերին մասնակցում էին 63 կուսակրոն եւ աշխարհիկ հոգեւորականներ: Այս ժողովի օրակարգում քննարկման դրված հարցերն էին՝

13 Անդ, թ. 52:

Առաջին

1. Կուսակրոն եւ աշխարհիկ հոգեւորականների միջեւ ներքին կապ ստեղծել.
2. Ժողովրդի եւ հոգեւորականության միջեւ բարոյական սերտ կապ ստեղծել.
3. Եկեղեցին իբրեւ գործոն հայ ազգային եկեղեցական կյանքում ներկայումս.
4. Եկեղեցու ներքին վարչական հարցեր.
5. Հայ հոգեւորականության մտավոր բարոյական բարձրացման խնդիր.
6. Գյուղական քահանաների խնդիր:

Երկրորդ

1. Կուսակրոն հոգեւորականության վերակենդանացում.
2. Վանքի վերածնության խնդիր.
3. Վարչական կազմակերպություն.
4. Վանական կանոնադրություն.
5. Կալվածական խնդիր.
6. Հոգեւոր միջնակարգ եւ տարրական դպրոցների խնդիր:

1917-1920-ական թթ. Մայրավանքի գլխավոր ղեկավարող մարմինն էր Միաբանական ժողովը, որին ենթարկվում էր նաեւ վանական կառավարությունը: Նրա լուծելու խնդիրներն էին՝ տնտեսական, միաբանությանը վանական պաշտոնների նշանակելը, միաբանների՝ վանքից բացակայելը, քահանաներին վերաբերող տարբեր տեսակի հարցեր եւ այլն[14]:

Միաբանական ժողովի ատենապետը եւ ատենադպիրը բաց քվեարկությամբ ընտրվում էին նույն միաբանական ժողովում[15]:

1920 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական կանոնադրությունը տարբերվում էր 1917թ. կանոնադրության նախագծից.

Ա գլխի («Հիմնական կանոնները»)չորրորդ կետը ունեցավ թեթեւակի փոփոխություններ եւ ավելացումներ:

ա) Քարոզել Ավետարան. բ) Ծառայել հոգեւոր կրթական գործին. գ) Մշակել հայագիտությունն ու հայ գեղարվեստը. դ) Հաստատել եւ պահել ատրվածահաճո հիմնարկություններ. ե) Դատրաստել եկեղեցու համար հոգեւոր վարիչներ.

Բ գլխի («Միաբանական կազմը») 11-րդ կետը եւս ենթարկվեց փոփոխության:

Միաբանության անդամ ընտրվում է նա, ով ունի՝

ա) Քաղաքացիական հասունություն, բ) Բարձր կամ միջնակարգ կրթություն. գ) Որ չունի հոգեկան եւ մարմնական արատ:

1920 թ. կանոնադրության մեջ մեծ տեղ էր հատկացվում Միաբանական ժողովին.

Դ գլխի («Միաբանական ժողովներ») 28-րդկետ. Միաբանական ներքին ժողովները գումարվում են ամիսը մեկ անգամ, որի գբաղման առարկաներն են՝

ա) Վանական խորհրդի զեկուցումներ. բ) Նոր պաշտոնյաների ընտրություն հրաժարվածների փոխարեն, առաջիկա ընդհանուր ժողովը. գ) Ընթացիկ հարցեր[16]:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Մայր Աթոռին արգե-

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 549, թ. 45-135:
15 Տե՛ս անդ, թ. 1:
16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 579, թ. 1-9:

լեցին ազգային-եկեղեցական ժողով գումարել եւ բարեւորոգության խնդիրներն իրականացնել: Այսուամենայնիվ Գեւորգ Ե Կաթողիկոսի պատվերով հայրապետական դիվանը 1923 թ. հուլիսի 3-ին թ.183 գրություն ուղղեց Էջմիածնի միաբանական ժողովին. «Ժամանակի ծանր բերմունքները, ժողովրդի դժվարին կացությունը հնարավորություն չեն տվել Հայ Եկեղեցու բարեկարգության խնդիրը լրջորեն քննության առնել տալ եւ հրավիրել ազգային-եկեղեցական Ժողով»:

Միաբանությանն առաջարկում էր. «Հայ եկեղեցու բարեկարգության խնդիրը, որը արծարծված է շատ վաղուց, եւ որի կարիքը զգացվում է ներկայումս եւս, քննության առնել միաբանական ժողովում զգուշությամբ, հեռատեսությամբ եւ գործնականության սահմաններում, կատարելով նախապատրաստական աշխատանքներ հարմար ժամանակում գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովի համար»:

Ազգային-եկեղեցական ժողովին սպասում էին նաեւ իրենք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, որոնք 1923 թ. նոյեմբերի 1-ին վճռական պահանջ ներկայացրին Գեւորգ Ե Կաթողիկոսին: Այստեղ մասնավորապես ասված էր. «... Մայր Աթոռ Էջմիածինը չունի այժմ դպրոց՝ հավատացյալների համար եկեղեցականներ պատրաստելու, չունի տպարան եկեղեցական եւ կրոնական գրքեր եւ միաբանների հայագիտական ուսումնասիրություններ տպելու, չունի իր պարբերական թերթը: Ներկա քաղաքակիրթ դարում կարո՞ղ է որեւէ եկեղեցի ապրել առանց այդ անհրաժեշտ ու կենսունակ գործոնների: Չէ՞ որ այդ գործոնների չլինելը Էջմիածնի միաբանությանը եւ հայ եկեղեցականներին դատապարտում է մտավոր մահվան: Եկեղեցին դարերի ընթացքում բարեփոխվել է ժամանակի պահանջների համեմատ, հարստացրել է իր եկեղեցական կարգերը, գրականությունը եւ ստեղծել է բարոյական արժեքներ, իսկ այժմ որեւէ ծրագրված եղանակով եւ աստիճանաբար միջոցներ չեն ընձեռում նույն շուքով ընթանալու եւ կատարելագործելու եւ կամ բարեփոխելու»:

Միաբանության անդամները պահանջեցին վերացնել դիվանը եւ սինոդը, ստեղծել Գերագույն հոգեւոր խորհուրդ:

Մայր Աթոռի միաբանության նման խիստ միահամուռ ելույթից հետո 1923 թ. նոյեմբերի 4-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում հաստատեց «Հայոց Եկեղեցու բարեւորոգության կենտրոնական հանձնաժողով», որի առջեւ դրվեցին Հայոց Եկեղեցու բարեկարգության հարցերը.

Ա. Ժամապաշտության կրճատումն ու բարեփոխությունը, այն է՝ Ժամագրքի, Շարականի, Ճաշոցի, Տոնացույցի կրճատումն ու բարեփոխությունը

Բ. Ծիսարան-Մաշտոցի կրճատումն ու բարեփոխությունը:

Գ. Հայոց եկեղեցում նաեւ աշխարհաբարի գործածության խնդիրը (ընթերցվածների եւ աղոթքների վերաբերմամբ):

Դ. Կուսակրոնության խնդիրը, որ կապ ունի Հայաստանյաց Եկեղեցու նվիրապետության արմատական փոփոխության հետ:

Ե. Հայաստանյաց Եկեղեցու սահմանադրության հարցը:

Զ. Հոգեւորականության նյութական հարցը:

Է. Հոգեւորականների սքեմի փոփոխության խնդիրը:

1924 թվականի հունվարի 1-ին Գեւորգ Ե Կաթողիկոսը թ.1 կոնդակով հաստատեց Գերագույն հոգեւոր խորհուրդը:

1926 թ. հունվարի 28-ից փետրվարի 16-ը Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ընդլայնված նիստը, որը նախագահում էր Խորեն արքեպիսկոպոսը: Նիստում եղած առաջարկների հիման վրա ընդունվեց հետևյալ որոշումը.

«Ժամանակավորապես, մինչև ազգային-եկեղեցական ժողովի գումարումը և նոցա միջոցով Գերագույն հոգևոր խորհրդի կազմ սահմանելը, խորհրդի մնայուն կազմը բաղկանում է Վեհափառ Հայրապետի կողմից հաստատված անձերից, որի նիստերին հերթով մասնակցում են թեմական առաջնորդները, ամսական երկու անձ, իսկ ընդլայնված նիստերին, բացի թեմական առաջնորդներից, մասնակցում են նաև յուրաքանչյուր թեմից ընտրված մի-մի աշխարհական պատգամավոր»:

Ընդլայնված նիստը կազմեց հատուկ հանձնաժողով՝ մշակելու համար Հայ Առաքելական եկեղեցու սահմանադրության նախագիծը: Հանձնաժողովի մշակած սահմանադրության նախագիծն ուներ հետևյալ մասերը.

Ա. Հիմնական կանոններ. Բ. Հայ Առաքելական Ազգային Եկեղեցու վարչակազմը. Գ. Ազգային-եկեղեցական ժողովի իրավասությունը. Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոս. Ե. Գերագույն հոգևոր խորհուրդ. Զ. Թեմական պատգամավորական ժողով. Է. Թեմական առաջնորդ. Ը. Թեմական առաջնորդական ժողով. Թ. Բարեկարգչական շրջանային ներկայացուցչական ժողով. Ժ. Շրջանային հոգևոր խորհուրդ. ԺԱ. Ծխական ժողով. ԺԲ. Ծխական-եկեղեցական հոգաբարձություն[17]:

Ի դարի սկզբից և մինչև Գևորգ Ե Կաթողիկոսի վախճանը Վեհափառ հայրապետները, տարբեր տեսակի պետական ճնշումների առկայությամբ, այնուամենայնիվ լուծել են Հայոց Եկեղեցու բարեկարգությանը նվիրված հարցեր:

Մկրտիչ Ա Խրիմյանի ժամանակ լուծվել են.

1. 1906 թ. մայիսի 10-ին թ. 549 կոնդակով թեմական առաջնորդների, հաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատությունների պաշտոնյաների ընտրական իրավունքը տրվել է ժողովրդին:

2. 1906 թ. Էջմիածնի ներքին հաստատությունների պաշտոնյաներին ընտրել:

Մատթեոս Բ Կաթողիկոսի ժամանակ.

1. 1909 թ. հոկտեմբերի 15-ին թ. 153 կոնդակով վերստին Էջմիածնի միաբանական ժողովին իրավունք է տրվել ներքին պաշտոնյաների ընտրությունը կատարել, որովհետև Մկրտիչ Ա-ի հաստատած կարգը 1907 թվին դադարել էր.

2. 1910 թ. հունվարի 1-ին եկեղեցական վարչական մարմիններում գրագրության համար աշխարհաբարի գործածություն է մտցնում:

Գևորգ Ե-ի ժամանակ.

1. 1912 թվին հատուկ կոնդակով ավելացնում է պսակի օրերի թիվը:

2. 1917 թվին թեմական պատգամավորական ժողովներն ու խորհուրդներն է վերահաստատում և հրահանգներ տալիս, որովհետև դրանք 1910 թվից սկսած ռուս միապետական կառավարության կարգադրությամբ դադարել էին:

10. 1917 թվին հաստատում է Ս. Էջմիածնի միաբանական ժողովը հատուկ կանոնադրությամբ:

17 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 57, թ.1:

11. 1922թ. նոյեմբերի 11-ին թ. 644 կոնդակով թույլ է տալիս այրի քահանաների կրկնամուսնությունը:

12. 1923թ. իրավունք է տալիս հայ եկեղեցում նոր տոմար գործադրելու եւ ժամապաշտության ժամանակ երգեհոն գործադրելու:

13. 1924 թվականի հունվարի 1-ին թ. 1 կոնդակով հաստատում է Գերագույն հոգեւոր խորհուրդը:

1930թ. վախճանվեց Գեւորգ Ե Կաթողիկոսը: Հայոց Եկեղեցու առջեւ հարց բարձրացվեց, թե հրավիրվող Ազգային-եկեղեցական ժողով գումարելու ժամանակ ինչ կանոնադրությամբ պետք է ղեկավարվել: Նախկին կանոնադրությունը որը գործի էր դրված մինչեւ 1917թ. Ազգային-եկեղեցական ժողովներ գումարելը, միապետական ժամանակվա համար էր եւ չէր կարող գործադրվել նոր, ժամանակաշրջանում: Հենց այդ պատճառով Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանը, Խորեն արքեպս. Մուրադբեկյանը, Բազրատ արքեպս. Վարդազարյանը, Գարեգին եպս. Հովսեփյանը եւ Գյուտ եպս. Տեր-Ղազարյանը 1930 թ. մայիսին մշակեցին եւ կյանքի կոչեցին Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն:

Ա.

1. Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու Գերագույն կանոնադիր մարմինը Ազգային-եկեղեցական ժողովն է:

2. Ազգային-եկեղեցական ժողովը գումարվում է Ս. Էջմիածնում:

3. Ազգային-եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց ծայրագույն Պատրիարք Կաթողիկոսը:

4. Ազգային-եկեղեցական ժողովի նախագահն է Ամենայն Հայոց ծայրագույն Պատրիարք Կաթողիկոսը:

5. Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Երուսաղեմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիվանդության դեպքում Ազգային-եկեղեցական ժողովը նախագահում են Սսոյ Կաթողիկոսը կամ Երուսաղեմի Պատրիարքը: Սոցա բացակայության դեպքում նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը:

7. Ազգային-եկեղեցական ժողովի իրավասության ենթակա են հետեւյալ հիմնական խնդիրները.

ա) Ընտրություն Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք Կաթողիկոսի (յետ մահուան ներկայ գահակալի): բ) Ընտրություն Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների: գ) Հաստատություն Ազգային-եկեղեցական սահմանադրության: դ) Քննություն եւ վճռահատություն եկեղեցական բարենորոգչական հարցերի: ե) Կարգավորում եկեղեցական տնտեսական վիճակի: զ) Վճռահատություն եկեղեցուն վերաբերող բոլոր հարցերի:

8. Ազգային-եկեղեցական ժողովը ինքն է որոշում իր զբաղմունքների օրակարգը եւ գործունեության ներքին հրահանգը:

Բ.

9. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են.

ա) Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, բ) Հայոց Եկեղեցու բոլոր առաջնորդները, գ) Հայոց Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները:

10. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են Ս. Էջմիածնի միաբանության , Ս. Երուսաղեմի միաբանության եւ Կ. Պոլսոյ Խառն ժողովի կողմից ընտրված մի-մի ներկայացուցիչները:

11. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրված, երեսուն տարին լրացած իրավասու ծխականները:

12. Յուրաքանչյուր թեմի ժողովուրդ մասնակցում է Ազգային—եկեղեցական ժողովին իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորներով:

13. Մինչեւ քսան եւ հինգ հազար ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է մեկ պատգամավոր, յուրաքանչյուր թեմ ընտրում է այնքան պատգամավոր, որքան անգամ քսան եւ հինգ հազար ժողովուրդ է պարունակում: Վերջին 25000-ը կարող է լրիվ չլինել, բայց ոչ պակաս 10000-ից:

14. Ազգային-եկեղեցական ժողովի թեմական պատգամավորների ընտրությանը մասնակցում են հոգեւորականների եւ քաղաքացիական չափահասություն ունեցող աշխարհական երկու սեռի իրավասու ծխականները:

15. Յուրաքանչյուր հազար շունչ ունեցող համայնք ընտրում է մեկ պավիրակ:

16. Պատվիրակները պատգամավորին կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից:

17. Ազգային-եկեղեցական պատգամավորների, անձնափոխանորդների, պատվիրակների ընտրությունը ԽՍՀ Միության սահմաններից դուրս գտնված թեմերում կատարվում է ըստ տեղական գործող Հայոց կանոնադրությունների, սահմանադրությունների, կամ ավանդական կարգերի՝ հրահանգվելով սույն կանոնադրությամբ:

18. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ճանապարհածախսը հոգում է պատգամավորին ընտրող թեմը, իսկ պատվիրակներինը՝ եկեղեցիները:

19. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության առթիվ ծագած տարաբնույթ հարցերի լուծումը տալիս է Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհուրդը

20. Հարկ եղած դեպքում Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհուրդը տալիս է հարկավոր բացատրություններ եւ հրահանգներ:

Գ.

21. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան դեպքում Կաթողիկոսի ընտրության համար Ազգային-եկեղեցական ժողով հրավիրում է Հայոց Կաթողիկոսի Տեղապահը Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդի հետ

22. Նոր Կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում Կաթողիկոսի մահվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

23. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը կատարվում է Ս. Էջմիածնի Տաճարում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահի:

24. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կարգը որոշում է Ազգային-եկեղեցական ժողովը:

25. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մինչեւ առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը[18]:

Վերոնշյալ կանոնադրությունը մինչեւ օրս ուժի մեջ է: Ըստ երեւույթին, Հայ Եկեղեցու նոր սահմանադրության ընդունումից հետո նա կկորցի իրավական ուժը:

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 13, թ. 30:

1932թ. տեղի ունեցած Ազգային-եկեղեցական ժողովը առաջինն էր, որի ուղեցույցը միապետական «Պոլոժենիեն» չէր, այլ 1930թ. Գերագույն հոգևոր խորհրդի կողմից հաստատված Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրությունը:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգում դրվեց նաև Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգության հարցը:

Ժողովում Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգության մասին զեկուցումով հանդես է եկել Գեորգ արքեպս. Չորեքչյանը, որի զեկուցման հիման վրա ժողովը հաստատել է հանգուցյալ Գեորգ Ե Կաթողիկոսի կանոնական 5 կոնդակները:

Բարեկարգության մյուս հարցերը թողնվեցին հետագա Ազգային-եկեղեցական ժողովի քննարկմանը:

Համաձայն Ազգային-եկեղեցական ժողովի որոշման՝ 1934թ. մայիսի 19-25-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր խորհրդի ընդլայնված նիստ, որտեղ քննարկվեցին Հայ Եկեղեցու սահմանադրության եւ բարեփոխման հարցերը[19]:

Եկեղեցու բարեփոխության հարցի մասին հանդես եկավ Գեորգ արքեպս. Չորեքչյանը՝ ներկայացնելով մի նախագիծ, որն ընդունվեց աննշան փոփոխություններով:

Գեորգ սրբազանի նախագծում շոշափվեցին հետեւյալ հարցերը՝

Ա. Ծիսական արարողության խնդիրներ. Բ. Ատենի ժամագրքի, Տոնացույցի, Ճաշոցի եւ Մաշտոցի կրճատումների եւ վերախմբագրման հարց. Գ. Եկեղեցական .խորհուրդներ եւ սրբազան արարողություններ. Դ. Ճաշոցի կրճատման խնդիր:

Ինչպես նաեւ տեղ գտան ընդհանուր հարցեր.

1. Հայ հոգեւորականության ցենզի խնդիր.
2. Կուսակրոն հոգեւորականության խնդիր.
3. Ամուսնական եւ ամուսնալուծության հարցեր.
4. Նոր տոմարի հարց.
5. Եկեղեցական սքեմի փոփոխության հարց.
6. Պահքի վերացման հարց.
7. Աստվածապաշտության լեզու:

Գեորգ եպիսկոպոսի զեկուցման «**Ծիսական արարողական խնդիրներ**» գլխի Ա. Ժամակարգություն մասում գրված էր. Հայ Եկեղեցու աստվածապաշտությունը ունի իր այլեւայլ արտահայտությունները, որոնցից մեկը Եկեղեցու ժամակարգությունն է:

Զեկուցողն առաջարկում էր.

Ընդառաջելով ներկա կյանքի պահանջներին՝ փոփոխության ենթարկել Հայ Եկեղեցու ժամակարգը՝ ղեկավարվելով միօրինակության եւ Առաքելական Եկեղեցու պարզության սկզբունքներով. ըստ այսմ՝ 1. վերացնել լուր օրերի ժամասացությունները, ինչպես եղել է քրիստոնեական եկեղեցու մեջ մինչեւ երրորդ դարի վերջերը: 2. Ժամասացություն կատարել միայն կիրակի եւ տոն օրերին: 3. Գիշերային եւ առավոտյան ժամերգություն կատարել միայն կիրակի եւ տոն օրերին, սակայն կրճատումներով: 4. Արեւագալի ժամերգությունը պահել միայն մեծի պահոց օրերին: 5. Վերացնել Մեծի պահոց օրերի ճաշի ժամը եւ պահել միայն Ս. Պատարագ մատուցվելիք օրերին, այն եւս՝ Պատարագին կից: 6. Ամեն կիրակի

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 194, թ. 1-7:

եւ տոն օրերին Պատարագ մատուցանել: 7. Երեկոյան ժամերգությունը թողնել անփոփոխ եւ կատարել միայն շաբաթ եւ կիրակի օրերին: 8. Խաղաղական ժամերգությունը նույնպես պահել Մեծի պահոց երեկոյան, բայց կրճատել: 9. Հանգստյան ժամերգությունը անփոփոխ պահպանել, սակայն կատարել միայն արտակարգ դեպքերում, ինչպես այժմ սովորություն է:

Եկեղեցական տոներ մասում առաջարկվում էր տոները կրճատել եւ տոների ընտրությունը կատարել հետեւյալ սկզբունքներով. 1. Պահել «Տերունական տոները, որոնք Փրկչի կյանքի եւ գործունեության շեշտված պահերն են ներկայացնում: 2. Պահել այն սրբոց տոները, որոնք համաքրիստոնեական կամ հայկական բնույթ եւ արժեք ունեն: 3. Համախմբումներ կատարել Մարգարեից, Հայրապետաց, Մարտիրոսաց եւ մի օր էլ նվիրել Ամենայն սրբոց տոներին:

Եկեղեցական խորհուրդներ եւ Սրբազան արարողություններ մասում առաջարկվում էր Մաշտոցից հանել այն սրբազան արարողությունները, որոնք բավականաչափ հեթանոսական սովորույթների դրոշմ են կրում:

1. Կանոն գիշերային ժամի աղօթից, որ կատարի ի վերայ ծանր հիւանդաց, ի բժշկութիւն ցաւոց եւ թողութիւն յանձանց:

2. Կանոն դժուարածին յղի կնոջ:

3. Կանոն վասն այսահարաց եւ լուսնոտիից:

4. Կանոն նորոգ սափրելոյ գերս պատանւոյն:

Եւ այսպես այլ կանոններ, որոնց մեծ մասը այսօր այլեւս չի կիրառվում:

Ճաշոցի կրճատման խնդիր մասում առաջարկվում էր կրճատել չափազանց երկար ընթերցվածները, որոնք առանց այն էլ երկար ժամասացությունը առավել եւս երկարացնում են՝ հոգնեցնելով եւ ձանձրույթ պատճառելով աղոթավորներին, փոխանակ նոցա մխիթարելու եւ ոգեւորելու:

Ընդհանուր հարցեր գլխի **Հայ հոգեւորականության ցենզի խնդիր** մասում նշվում էր, որ հայ հոգեւորականությունը ծանոթ պիտի լինի ներկա բնական գիտությունների, իմաստասիրության եւ սոցիալական գիտությունների եզրակացություններին, ուսումնասիրած լինի կրոնների եւ ընդհանուր ազգերի պատմությունը, յուրացրած լինի քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքները եւ այն իր կյանքի առաջնորդ եւ ղեկավար ճանաչի: Ինչպես նաեւ նոր հոգեւորականությունը պիտի ունենա ընդհանուր եւ մասնագիտական բնույթ կրող բարձրագույն կրթություն:

Կուսակրոն հոգեւորականություն մասում նշվում էր, որ վերջին տասնամյակներում հաճախ արծարծվել է կուսակրոնության վերացման հարցը: Այս հարցը արծարծվել է նաեւ 1917 թ. համագումարում եւ մտքերի երկու հոսանք առաջ բերել: Մի հոսանքը կողմնակից է կուսակրոնության վերացման՝ համարելով այն անբնական երեւույթ եւ ուխտադրժությունը՝ անհուսափելի, այլեւ այն հանգամանքը, որ ամուսնությունը սրբագործված է եկեղեցու կողմից, եւ ամուսնացած եպիսկոպոսությունը՝ ճանաչված թե մեր, թե տիեզերական Եկեղեցում: Մյուս հոսանքը, հակառակ վերոհիշյալին, պնդել է, որ բժշկական տեսակետով անբնական եւ վնասակար երեւույթ չէ ոչ ամուսնական կյանքը, եւ ուխտադրժությունը վերացման հիմք չի կարող ծառայել, քանի որ նույն երեւույթը ավելի մեծ չափերով տեղի ունի նաեւ աշխարհիկ հոգեւորականության եւ աշխարհականների մեջ:

Այս զեկուցման հեղինակ Գեորգ եպիսկոպոսը եզրակացնում է. «Թվում է, թե վերջին տարիների փորձը, անշուշտ, բոլորին էլ բերած կլինի այն համոզմունքին, որ կուսակրոն հոգեւորականություն անհրաժեշտ է եկեղեցու գոյության պահպանության համար:

Ամուսնական եւ ամուսնալուծական հարցեր մասում նշվում էր, որ դեռեւս Գեորգ Ե Կաթողիկոսը, նկատի առնելով նոր կյանքի պայմանները, 1922թ. նոյեմբերի 11-ին արձակել էր թ. 645 կանոնական կոնդակը, որով թույլատրեց ազգակցական 3-րդ եւ խնամիական 4-րդ աստիճանի պսակը, եւ վերացրեց հոգեւոր ազգակցության ամեն տեսակ արգելքները ամուսնության վերաբերյալ:

Գերագույն հոգեւոր խորհուրդը, վերջերս միայն եւ այն էլ կյանքի սրիպողական պահանջների առաջ տեղի տալով, թեթեւացրել է ամուսնալուծությունը, նաեւ այլ պայմաններ ամուսնալուծության հիմք ծառայեցնելով:

Զեկուցման հեղինակը առաջարկում էր այս հարցի համար հիմք ընդունել Շահապիվանի ժողովի որոշումը, որով ամուսնությունը լուծելի էր համարվում հետեւյալ պատճառներով.

1. Ամուսնական անհավատարմություն,
2. Ամլություն,
3. Մարմնական եւ հոգեկան արատներ,
4. Արբեցողություն,
5. Անհաշտ բնավորություն (ծեծ, կռիվ եւ այլն):

Նոր տոմարի հարց մասում նշում էր, որ դեռեւս 1923թ. նոյեմբերի 9-ին արձակվել էր թ. 349 Հայրապետական կոնդակը նոր տոմարն ընդունելու վերաբերյալ, եւ ըստ որի այդ թվից Էջմիածնի օրացույցը կազմված է նոր տոմարով:

Եկեղեցական սքեմի փոփոխության հարց մասում նշվում էր, որ Գերագույն հոգեւոր խորհրդի կարծիքով հարմար կլինի պարտադրել հոգեւորականության հոգեւոր սքեմ կրել եկեղեցում, պաշտոնական հանդեսների ժամանակ, որից դուրս՝ արտոնել նրանց աշխարհիկ սքեմ կրել:

Աշխարհիկ հոգեւորականության ապահովության խնդիր մասում նշվում էր, որ Հայոց Եկեղեցում ընդունված սովորության համաձայն՝ աշխարհիկ հոգեւորականությունը իր պաշտոնավարության համար որոշ եւ հաստատուն վարձատրություն չի ստանում, այլ ապրում է օրինակատարություններից ստացած կամավոր տուրքերով եւ գանձանակադրամով: Վարձատրության այս եղանակը այլ ասպարեզներում չի կիրառվում, եւ ներկա հասկացողությամբ եւ քահանայության իր իսկ ըմբռնմամբ համարվում է այդ ձեւը վիրավորական եւ նվաստացուցիչ, որի պատճառով քահանայությունը հաճախ կորցնում է իր ներքին անկախությունը եւ ենթարկվում անհատ ծխականների քմահաճույքին, ուստի առաջարկվում է ազնվացնել նյութական վարձատրության ձեւը, ընդունելով ռոճիկ տվչության սկզբունքը, որ որոշ տեղերում արդեն ընդունված է:

Պահքի վերացման հարցում նշվում էր, որ պասերի կրճատմամբ ինքնին առաջ է գալիս պսակի օրերի նոր ընդլայնման հարցը: Այս խնդրի նկատմամբ առաջարկ կա անխտիր ամեն օր պսակ կատարել: Գերագույն հոգեւոր խորհուրդը հնարավոր էր համարում պսակի օրերի արգելքը վերացնել՝ արգելելով միայն Ս. Ջատկի եւ Ս. Ծննդյան շաբաթապասերը:

Ասպվածապաշտության լեզուն մասում ասված էր. Աստվածապաշտության կար-

գի հետ ասպվածապաշտության լեզուն անցյալի ծնունդ է, որ իր ժամանակ ժողովրդին հասկանալի լեզու է եղել, բայց այժմ անհասկանալի է, ուստի եւ հասարակաց աղոթքը, որի նպատակն է ստեղծել ընդհանուր կրոնական տրամադրություն աղոթողների մեջ եւ նոցա միացնել, չի ծառայում իր նպատակին: Այս հարցի նկատմամբ եղած առաջարկները (թարգմանել Ս. Գիրքը, շարականները եւ աղոթքները) ցանկալի են, բայց շատ դժվար իրագործելի: Գերագույն հոգեւոր խորհուրդը հնարավոր է գտնում թույլատրել, որ Ս. Գրքի որոշ հատվածներ եւ հայրերի թղթերը թարգմանաբար կարդացվեն՝ եղած թարգմանություններից օգտվելով, մինչեւ որ հնարավոր կլինի Ս. Գիրքը ամբողջովին թարգմանված տեսնել[20]:

Բարեփոխության այս նախագիծը հաստատվեց Հայոց Եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից եւ ուղարկվեց նվիրապետական աթոռներին եւ թեմերին:

1937թ. օգոստոսի 1-ին Խորեն Ա Կաթողիկոսը հայրապետական կոնդակ ուղղեց նվիրապետական աթոռներին՝ նրանց կարծիքը հարցնելով Հայոց Եկեղեցու բարենորոգման մասին[21]:

Խորեն Ա-ի այս կոնդակին պատասխանեցին ինչպես Կիլիկիո Սահակ Բ Կաթողիկոսը, այնպես էլ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպս. Գուշակյանը: Առաջինը մասնավորապես գրում էր. «Հայրենի օճախին քանդումը եւ մեր ժողովրդին ազգային աւանդութիւններէ ուծացումը, եւ կրուած տառապանքը աւելի եւս շեշտեցին կրօնական զգացումին պակասը անոր մէջ: Եւ այսօր «լինելու կամ չլինելու» մղձավանջէն՝ զրկուած ու մատնուած տնտեսական դժուարին կացութեան մը, կարելի է ըսել թէ ան կրօնապէս հիւանդագին վիճակ մըն է, որ կը ցուցադրէ: Այս դարերէ ի վեր ազգային, գոյութեան ու փրկութեան իբրեւ միջնաբերդ ծառայեց, այսօր լրջօրէն վտանգուած պէտք է նկատել, որովհետեւ որէ օր թուլնալու վրայ է այն ազգային կապը, որ ժողովուրդ, եւ եկեղեցի իրարու կը կապէր: Կրօնական հիւանդութեան ախտաճանաչումէն վերջ, կը մնայ ուսումնասիրել անոր ծնունդ տուող պատճառները, եւ սկսիլ դարմանումի: Ահա դէպի այդ կը ձգտի Հայրապետական կոնդակը»[22]:

Բարեփոխության հարցի մասին իր տեսակետը արտահայտեց նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, որը իր հոդվածներով ելույթ ունեցավ 1937թ. հոկտեմբերից մինչեւ 1938թ. նոյեմբեր «Սիոն» ամսագրում, եւ որոնք 1940թ. տպագրվեցին «Բարեկարգութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ» առանձին գրքով:

Անելով իր եզրակացությունները Հայ Եկեղեցու բարեփոխության վերաբերյալ՝ Թորգոմ պատրիարքը «Լուր օրերս ժամերգութեան» գլխի մեջ հաստատակամ նշում էր. «Հայ Եկեղեցին բաց պէտք է լինի ամէն օր, կանոնական աղօթաժամերուն: Ժողովուրդ լինի կամ ոչ, հոգեւորական պաշտօնեան պէտք է կատարէ ժամասացութիւնը: Եթէ ունի իրեն պաշտօնակիցներ կամ օգնականներ՝ կատարելով ամբողջն ըստ կարգի, հակառակ պարագային՝ կարդալով գէթ աղօթքները, եւ մնացեալը քաղելով լռելեայն: Հաւատացյալը, որ այդ պահերուն կը մտնէ եկեղեցի, պէտք է վառ գտնէ կանթեղը Ս. Սեղանին վրայ, պէտք է ընդունի աղօթքին, մաղթանքին, ընթերցուածներուն եւ օրհներգներուն ազդած հոգեւոր սփոփանքը կամ գէթ տեսնէ քահանան լռին, աղօթասոյզ, բեմին կամ գրակալին առջեւ:

20 Տե՛ս **Թորգոմ պատրիարք Գուշակեան**, Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1940, էջ 17-29:

21 Տե՛ս «Հասկ», Անթիլիաս-Լիբանան, 1937, թ. 9-10, էջ 110-112:

22 «Հասկ», 1937, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 105:

...Եկեղեցական Բարեկարգութեան կարեւոր կետերէն մին եւս պաշտամունքի լեզուին, այսինքն՝ գրաբարի խնդիրն է: Հարցը կը դրուի սա կերպով, քանի որ գրաբարը ընդհանուր առմամբ անհասկանալի է ժողովրդին, անիկա այլեւս չի կրնար ծառայել հոգեւորապէս, չկարենալով հաւատացեալին հաղորդել Ս. Գրոց աղօթքներու, երգերու եւ զանազան ընթերցուածներու իմաստը:

Գրաբարը, իբրեւ մեր պատուական նախնեաց լեզուն եւ բարբառը, միակ կապն է այսօր, որ կը միացնէ զմեզ տակաւին մեր նախնեաց հետ, ու եկեղեցին է, այժմ, այն զանձարանը, ուր մեր անցեալ սրբութեանց հետ կը պահպանէ դեռ գրաբարը, անոր վտարումը մեր եկեղեցիէն՝ գրեթէ պիտի նշանակէր խզում մեր նախնեաց հետ, ինչ որ անշուշտ ցանկալի չէ ոչ մէկ Հայու»[23]:

Սակայն Խորեն Ա Կաթողիկոսի խորհրդաւոր մահը եւ երկրորդ համաշխարհային պատերազմը արգելակեցին այս հարցերի վերջնական լուծումը:

Հայ Եկեղեցու բարեկարգության հարցերը շոշափվեցին նաեւ 1941, 1945 եւ 1955 թվականներին գումարված ազգային-եկեղեցական ժողովներում, առանց լուրջ քննարկումների եւ որոշումների ընդունման:

1991թ. Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհուրդը եւ եպիսկոպոսական ժողովը խմբագրեցին եւ շուտով հրապարակեցին «Ներքին թեմերի եկեղեցական կանոնադրություն»՝ «Նպատակ ունենալով վերակազմակերպել Հայաստանի եւ ներքին սփյուռքի տարածքի վրա հայ առաքելական եկեղեցու կանոնական եւ վարչական կյանքը՝ համաձայն եկեղեցական ավանդական կարգ ու կանոնի»:

Վազգեն Ա Կաթողիկոսի հոգեւոր կտակը եղավ նաեւ 1994թ. ապրիլի 22-ի կոնդակը՝ «Հայ Առաքելական Եկեղեցվոյ սահմանադրության ստեղծման մասին», որտեղ մանրամասնորեն վերլուծելուց հետո Հայ Եկեղեցու կառույցը, կանոնադրությունը, իր եւ նախորդ կաթողիկոսների նախաձեռնությունները եւ անկախ Հայաստանի իրողությունը, վեր կառներ Հայ Եկեղեցու ժողովրդական նկարագիրը եւ հայ ժողովրդին կվերադարձներ իր՝ առաջնորդ ընտրելու իրավունքը եւ Հայ Եկեղեցու պատշաճ կանոնադրության մշակումը կտեսներ միայն ժողովրդի լայն զանգվածների մասնակցությամբ:

1995թ. փետրվարի 26-ին Ս. Էջմիածնի Սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողովի կողմից, որի նախագահն էր ԱՄՆ-ի Արեւմտյան թեմի առաջնորդ Վահե արքեպիսկոպոս Հովսեփյանը, մշակվեց «Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ սահմանադրութիւն»-ը: Այս նախագիծը նման էր նախորդներին: Ցանկություն կամ առաջարկություն արվում էր, սակայն չէր տրվում խնդրի լուծման ուղին: Օրինակ, հոդված 118-ի «Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամները կընտրուին աշխարհագրական հիման վրայ» արտահայտությունն անհասկանալի էր մնում, թե Սահմանադրության նախագծի մշակողները ինչով էին ղեկավարվել Գերագույն Հոգեւոր Խորհրդի մեջ՝ Ամերիկայի թեմերից ընդգրկելով 3 հոգեւորականի, իսկ Հայաստանի թեմերից միայն 4-ին՝ չնայած տեղի հայության թվին: Հանձնաժողովի կողմից առաջարկվող նախագծի մեջ միայն թեթեւակի եւ մակերեսորեն նշվում էր եկեղեցու՝ սեփականություն ունենալու իրավունքը, եւ նշված չէին ճեմարանի, դպրավանքերի, թանգարանների, գրադարանների իրավունքները եւ կարգավի-

23 **Թորգոմ Պապրիարք Գուշակեան,** Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ,էջ 31-133:

ճակը: Սահմանադրության մեջ պետք է նշվեր նաեւ եկեղեցական բյուջեն, ինչպես նաեւ Հայ եկեղեցու իրավունքը՝ ամենալայն ինքնավարության իրավունքը Հայաստանի պետության սահմանների ներսում:

Գարեգին Ա Կաթողիկոսի օրոք եւս Վաչե սրբազանը շարունակում էր զբաղվել Հայ Եկեղեցու Սահմանադրության (Կանոնադրության) մշակման խնդրով: Այդ հարցը, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու բարենորոգության հետ կապված այլ հարցեր բարձրացվել էին 1997թ. ապրիլի 3-ին Մայր Աթոռում գումարված թեմական առաջնորդների եւ թեմի աշխարհական պատգամավորների խորհրդակցական ժողովում: Նորին Սրբությունը իր զեկույցում մասնավորապես նշեց. «Նոր ոգեւորությամբ նոր շարժում մը պետք է ադրերանա եւ ծավալվի Մայր Աթոռեն, որուն իբրեւ բնորոշիչ բացատրություն կրնանք շեշտյալ ձեւով ըսել Հոգեւոր Վերազարթոնք», եւ ապա ավելացրեց, որ այդ շարժման ծիրի մեջ առաջնահերթ գործունեության դաշտերից մեկը պետք է լինի Հայաստանի եւ նախկին Խորհրդային Միության տարածքում ապրող հայության մեր հայրերի ավանդույթներով քրիստոնեական կյանքի նորոգումը...»:[24] Այս ժողովում կազմվեց Կանոնադրության հանձնախումբ՝ նախագահությամբ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանի եւ անդամակցությամբ Վաչե արքեպս. Հովսեփյանի, Գարեգին արքեպս. Ներսիսյանի, Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի, Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի, Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի, Խաժակ արքեպս. Պարսամյանի:

Գարեգին Բ Ներսիսյանը Կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո հատուկ ուշադրություն էր դարձնում Հայ Եկեղեցու բարեկարգության, ինչպես նաեւ Սահմանադրության խնդիրներին: Այդ հարցը բազմիցս շոշափվել է Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Կանոնադրության հանձնախմբի 2001, 2002, 2003 թվականների նիստերին:

Հայ Եկեղեցու բարեկարգության, ինչպես նաեւ ամերիկահայ եկեղեցիներում Ս. Պատարագը անգլերեն լեզվով մատուցելու դեմ արտահայտվեց Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական պատվիրակ Մեսրոպ արքեպ. Գրիգորյանը:

Ինչպես Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, այնպես Էլ Մեսրոպ արքեպս. կտրուկ դեմ էին ավելի շատ բողոքական եկեղեցուն հատուկ նմանատիպ քայլերին եւ նոր ժամանակներից բխող այդ բարենորոգումը համարում էին անհարիր Հայ Եկեղեցուն:

Հայ Եկեղեցու բարեկարգությունը չի կարող խարխլել նրա հիմքերը, այլ պետք է Հայ Եկեղեցին դարձնի ավելի կատարյալ, ավելի արդիական:

24 «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 7: